ՆԵՐԳԱՂԹԸ ԻՐԱՆԷՆ

6000 ՀՈԳԻ ՊԻՏԻ ՏԱՆԻՆ ԱՌԱՑԺՄ

Թեհրանէն 16 Յունիս բուականով կը գրեն Յուսաբերի.—

Երեւանից ներգաղթի գործով երկու հոգի եկած են՝ տեղի վրայ ամէն ինչ կարգադրելու համար։ Որոշած են առայժմ տանիլ 6000 հոգի, որից 1500ը՝ Նոր Ջուղայից, իսկ մնացեալը՝ Զհարմահալի և Փերիայի գիւղական շրջաններից։ Զհարմահալն ունի 9 գիւղ (շուրջ 3000 շունչ), իսկ Փերիան՝ 24 գիւղ (18.000 շունչ) իսկ Ջուղան՝ 5.000 շունչ. ընդամէնը 26.000 շունչ։

Զհարմահալից տանում են 6 գիւղ ամբողջապէս, իսկ Փերիայից՝ 10 գիւղ, որոնք թէ փոքր են և գտնւում են շրջանի ծայրամասերում և աւելի ենթակայ են վտանգի։

Այս շրջանների հայութիւնը, ինչպէս յայտնի է, սրանից աւելի քան երեք դար առաջ բռնի տեղահանուեց իր բնակավայրից՝ Հին Ջուղայից, պարսից հռչակաւոր արքայ Շահ Ապպաս Ա.ի կողմից (1586—1629) և բերուեց ու տեղաւորեց Սպահանի մերձակայքը, ուր և հիմնադրեց Նոր Ջուղան։

Աւելի քան երեք դար օտարութեան մէջ ապրելով՝ այդ հայութեան բեկորները պիտի վերադառնան հայրենիք։